ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

HAYKAZ HOVHANNISYAN
VARSIK TIGRANYAN

WAYS OF ATTRACTING INVESTMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Key Words: *integration Processes, gross savings, domestic investment, foreign direct investment, transnational corporations, high efficiency, chemical industry*

Armenia, as a small open economy, depends heavily on the world economy. Internal sources of investment financing in Armenia are very limited. In this sense, the emergence of new economic, political, socio-cultural relations, thanks to the division and redistribution of markets between the modern economy, creates prerequisites for new integration unions. We believe that with the purpose of attracting additional investments, integration of transnational corporations into the Armenian economy can be applied in a number of spheres, including in the chemical industry.

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՏԱԹԵՎԻԿ ԱԶԱՏՅԱՆ
Կրտսեր գիտաշխատող, ՀՊՏՀ

ԴՐԱՄԱՅՆԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՐԱ (ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Հիմնաբառեր. *ԵԱՏՄ, դրամական ագրեգատներ, դրամայնացում, ՀՆԱ, Ազգային բանկ, առևտրային բանկեր, արժույթ, համակարգ,*

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվել ներկայացնելու ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսական իրավիճակի վրա դրամայնացման ազդեցությունը: Մասնավորապես՝ բացահայտվել են դրամավարկային քաղաքականության դերը և հիմնական ուղղությունները, դրամական միջավայրի կայունությունը և դրա ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Դիտարկվել է ԵԱՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունը, բերվել են տվյալ երկրների դրամական ագրեգատների վերաբերյալ տվյալներ: Հաշվարկվել են վերջին տարիներին ԵԱՏՄ անդամ երկրների դրամայնացման մակարդակները, որոնք թույլ են տալիս համեմատել դրամական ագրեգատները և որոշել, թե որքան է դրամական հոսքերի ծավալի ապահովման աստիճանը ՀՆԱ իրացման համար:

Եվրասիական տնտեսական միությունը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն է՝ օժտված միջազգային իրավասուբյեկտությամբ և հիմնադրված Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, որը ստո-

րագրվել է 2014 թ. մայիսի 29-ին Աստանայում: ԵԱՏՄ-ն ստեղծվել է Բելառուսի, Ղազախստանի ու Ռուսաստանի Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի հիմքի վրա: Մաքսային միությունը սկսել է գործել 2010 թ. հունվարից, իսկ 2011 թ. դեկտեմբերին որոշում է կայացվել Միասնական տնտեսական տարածքը ձևավորող միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելու մասին, ինչն էլ նախանշել է 2012 թ. հունվարի 1-ից ՄՏՏ ձևավորող համաձայնագրերի կիրառումը՝ մինչև 2015 թ. Եվրասիական տնտեսական միության ստեղծման վերջնական նպատակով: ԵԱՏՄ-ն հիմնադրվել է ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացման, համագործակցության, մրցունակության բարձրացման և անդամ պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված կայուն զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով: ԵԱՏՄ-ում ապահովվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը, ինչպես նաև համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության վարումը տնտեսության ոլորտներում՝ ԵԱՏՄ պայմանագրի դրույթներին համապատասխան[1]: Ուստի հոդվածի շրջանակներում փորձ է արվել բացահայտելու ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը:

Դրամավարկային քաղաքականությունը կարող է սահմանվել որպես մի գործընթաց, որի միջոցով կենտրոնական բանկը վերահսկում է դրամական զանգվածը, փողի առկայությունը և գումարի արժեքը, տոկոսադրույքի մակարդակը՝ մի շարք նպատակների հասնելու համար, որոնք ուղղված են ֆինանսական կայունության ապահովմանը[2]:

Դիտարկենք ԵԱՏՄ անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունը և դրա գործիքները հետճգնաժամային փուլում՝ օգտվելով ստորև բերված աղյուսակի տվյալներից: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական միտումները չեզոքացնելու գործողություններում ՌԴ ԿԲ հիմնական խնդիրն է եղել նվազեցնել գնաճի մակարդակը և զսպել սպառողական գների աճը: Դինամիկայի առումով, գնաճը և դրա հետ կապված ռիսկերը եղել են շատ փոփոխական՝ պայմանավորված դրամական ագրեգատների շարունակական աճով: Մասնավորապես՝ ՌԴ-ում M_0 դրամական ագրեգատը հետճգնաժամային 2013–2016 թթ. ընկած ժամանակահատվածում աճել է 10,4%-ով, M_1-ը՝ 13,54%-ով, M_2-ը՝ 22,33%-ով: Համակարգային իրացվելիության անբավարարությունը մեծապես ազդել է դրամավարկային կարգավորման գործընթացի վրա: Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկը ավելի շատ է դիմել վերաֆինանսավորման գործիքների մատչելիության և դրամական շուկայում տատանումների նվազեցման համար միջոցներ տրամադրելուն[3]: Տարեկան գնաճը 2016 թ. եղել է 5,4%-ի սահմաններում:

---

[1] www.eaeunion.org

[2] Interdisciplinary Journal of Contemporary Research in Business. May 2011. Vol. 3. 1 Impact of Monetary Policy on Gross Domestic Product (GDP) by Irfan Hameed. URL: http://www.academia.edu/639 117/ Impact_of_Monetary_Policy_on_Gross_ Domestic_Product_GDP_.

[3] Годовые отчеты Национального банка Республики Беларусь за 2012-2016, Национального Банка Республики Казахстан за 2012-2016 , Центрального банка Российской Федерации за 2012-2016 г.

Աղյուսակ 1

ԵԱՏՄ անդամ երկրների դրամական ագրեգատների ծավալը (մլրդ, ազգային արժույթ)[1]

Դրամական ագրե-գատներ	2005			2009			2013		
	M_0	M_1	M_2	M_0	M_1	M_2	M_0	M_1	M_2
ՌԴ	2009	4022	6032	4038	11 229.5	15 268	6986	15 537	31 405
ԲՀ	2016	4945	8594	3647	11305	20 737	12 302	37 099	79 331
ՂՀ	385 714	749 574	1478 931	874 577	2 536 665	5 394 164	1 397 708	3 489 766	8 852 632
Ղ	13,0	15,0	15.9	33,8	40,1	44,4	60,9	79,7	90,6
ՀՀ	0,144 311	0,202 061	0,224 802	0,282 441	0,386 795	0,450 878	0,384 467	0,583 369	0,848 046
Դրամական ագրե-գատներ	**2014**			**2015**			**2016**		
	M_0	M_1	M_2	M_0	M_1	M_2	M_0	M_1	M_2
ՌԴ	7 172	15 341	32 111	7 239	16 515 6	35 809	7 714	17 642	38 418
ԲՀ	13 924	41 764	90 845	14 236	42 733	90 496	17 900	53 240	108 070
ՂՀ	1 035 712	2 800 476	7 631 962	1 174 178	2 971 351	8 567 539	1 619 063	4 310 015	12 098 181
Ղ[2]	51,9	69,2	82,3	53,1	70,4	82,2	69,3	97,6	115,4
ՀՀ	0,348 359	0, 531 245	0, 818 277	0,345 507	0,555 621	0,860 477	0,390 918	0,655 705	1, 073 73

ԵԱՏՄ անդամ մեկ այլ երկրում՝ Բելառուսի Հանրապետությունում բելառուսական ռուբլու փոխարժեքը ձևավորվել է ներքին շուկայում արտարժույթի պահանջարկի և առաջարկի հիման վրա՝ Ազգային բանկի սահմանափակ միջամտությամբ: Հետճգնաժամային փուլում Բելառուսի Ազգային բանկը լայնորեն կիրառեց տոկոսադրույքը՝ որպես դրամավարկային քաղաքականության վրա ազդելու գործառնական գործիք: Որպես իրացվելիության ձեռքբերման հիմնական գործիքներ են կիրառվել Ազգային բանկի ավանդները և աճուրդի միջոցով կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումը: Տարեկան գնաճը 2016 թ. 10,6%-ի սահմաններում էր:

Դիտարկենք Բելառուսի դրամավարկային ցուցանիշները հետճգնաժամային շրջանում: 2013–2016 թթ. ընկած ժամանակահատվածում M_0-ն աճել է 45.5%-ով, M_1-ը՝ 43.5%-ով, M_2-ը՝ 36.2%-ով:

Բելառուսական ռուբլու գնման ինտենսիվությունը կանխելու և գնողունակությունը պահելու համար երկրի Ազգային բանկն իրացվելիության պակասուրդի ժամանակահատվածում իրականացրել է բանկերի վերաֆինանսավորում՝ շուկայական պայմաններով,

---

[1] Աղբյուրը՝ կազմել է հեղինակը՝ URL: http://www.cbr.ru/statistics/c reditstatistics/ms.asp URL: http://www.cbr.ru URL:http://www.nationalbank.kz/?docid=289&switch=russian URL:http://www.nbrb.by/statistics/MonetaryStat/BroadMoney; URL: http://eec.eaeunion.org/hy/Pages/library.aspx, URL: http://www.cbr.ru/statistics/credit_statistics/ms.asp URL: http://www.cbr.ru URL:http://www.nationalbank.kz/?docid=289&switch=russian URL:http://www.nbrb.by/statistics/MonetaryStat/BroadMoney URL:http://eec.eaeunion.org/hy/Pages/library.aspx URL: http://www.cba.am URL: http://stat.kg/ru/ URL: http://www.nbkr.kg

[2] 2014 թ. դեկտեմբերի 23-ին Մոսկվայում պայմանագիր է ստորագրվել Ղրղզական Հանրապետության՝ ԵԱՏՄ-ին միանալու մասին (Ղրղզստանը ԵԱՏՄ անդամ է 2015 թ. օգոստոսի 12-ից):

նվազագույն ծավալներով և երկու անգամ ավելացրել է պահանջվող պահուստի հարաբերակցությունը[1]:

ԵԱՏՄ անդամ երկրներից Ղազախստանում Ազգային բանկի դրամավարկային քաղաքականության գործիքները նպատակաուղղված են երկրում գների կայունության և տարեկան գնաճի՝ 8,96%-ի սահմաններում զսպմանը (2016): Այստեղ 2013–2016 թթ. ընկած ժամանակահատվածում M_0-ն աճել է 15,8%-ով, M_1-ը՝ 23,5%-ով , M_2-ը ՝ 36,6%-ով:

ԵԱՏՄ անդամ երկրներից Ղրղզստանում Ազգային բանկի դրամավարկային քաղաքականության գործիքները նպատակաուղղված են երկրում գների կայունության և տարեկան գնաճի՝ 2,9%-ի (2016) սահմաններում զսպմանը: 2013–2016 թթ. ընկած ժամանակահատվածում երկրում M_0-ն աճել է 1,14%-ով, M_1-ը՝ 1,22%-ով , M_2-ը՝ 1,27%-ով:

ԵԱՏՄ անդամ երկրներից ՀՀ-ում ԿԲ-ի դրամավարկային քաղաքականության գործիքները նույնպես նպատակաուղղված են երկրում գների կայունության և տարեկան գնաճի՝ 4%-ի սահմաններում զսպմանը: 2013-2016 թթ. ընկած ժամանակահատվածում M_0-ն աճել է 1,6%-ով, M_1-ը՝ 12,23%-ով, M_2-ը ՝ 26,6%-ով:

Դրամական ագրեգատների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013–2016 թթ. ընկած ժամանակահատվածում ամենաբարձր աճը M_0 և M_1 ագրեգատների գծով եղել է Բելառուսում, իսկ M_2 ագրեգատի գծով՝ Ղազախստանում:

Ամբողջական գնահատման համար աղյուսակ 2-ում ներկայացրել ենք ԵԱՏՄ անդամ երկրների դրամական ագրեգատների մաթեմատիկական տրենդների հաշվարկված արժեքները 2005–2016 թթ.:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ անդամ երկրների դրամական ագրեգատների մաթեմատիկական տրենդների համեմատականը 2005–2016 թթ.

Երկրները	R^2			Y		
	M_0	M_1	M_2	M_0	M_1	M_2
ՌԴ	0.7	0.2	0.8	33341.6 ln(x)+2195.4	42137 ln(x)-8049.9	18980 ln(x)+5694.4
ԲՀ	0,89	0,89	0,86	9168,1 ln(x)+618,66	27844 ln(x)+1316,9	59326 ln(x)+1292,8
ՂՀ	0,69	0,68	0,83	571663 ln(x)+454307	2 E+06 ln(x)+1E+06	5E+06 ln(x)+2E+06
Ղ	0,70	0,79	0,79	28,502 ln(x)+6,7462	41,701 ln(x)+16,274	58,535 ln(x)+4,9644
ՀՀ	0.6	0.7	0.8	0,1269 ln(x)+0,1769	0,2361 ln(x)+0,2269	0,4547 ln(x)+0,2141

Մակրոտնտեսական իրավիճակի վրա ազդելու համար օգտագործվում են դրամավարկային քաղաքականության միջոցները, որոնց իրականացման համար պետք է հասկանալ դրամավարկային փոխանցման մեխանիզմը: Դրամավարկային քաղաքականու-

[1] Годовой отчет Национального банка Республики Беларусь за 2012 год, Национального Банка Республики Казахстан за 2012 год, Центрального банка Российской Федерации за 2012 год.

թյան որոշ գործիքներ փոխում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են տոկոսադրույքները, որոնք, իրենց հերթին, ազդում են տնտեսության տնտեսավարող սուբյեկտների վարքագծի վրա[1]:

Դրամայնացման մակարդակը ցույց է տալիս փողի զանգվածի և ՀՆԱ հարաբերակցության աճը: Պետք է հասկանալ, որ փողի պահանջարկի վերլուծությունը նույնպես ազդում է դրամայնացման վրա: ԵԱՏՄ անդամ երկրներում, որտեղ ֆինանսական միջոցները բաղկացած են փողից, կարելի է նաև ուշադրություն դարձնել գնաճի մակարդակի վրա: Գոյություն ունեն դրամայնացման մակարդակի հաշվարկման մի քանի եղանակներ: Օրինակ է համարվում այն մոդելը, որտեղ դրամայնացման մակարդակը հաշվարկվում է որպես դրամական զանգվածի և անվանական ՀՆԱ հարաբերակցություն՝ հաշվի առնելով մակրոտնտեսական և ժողովրդագրական գործոնները և ֆինանսական հատվածի բարեփոխումների վիճակը:

Անկախ փոփոխականներն ընտրվում են այս հարցի բազմաթիվ ուսումնասիրությունների հիման վրա՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ կախված տնտեսական զարգացվածությունից, տոկոսադրույքները, որոնք խթանում են բանկերի ավանդների ավելացումը, գնաճային սպասումները և իրական գնաճի մակարդակը, գյուղական բնակչության բաժինն ընդհանուր բնակչության մեջ, որը արտացոլում է ֆինանսական ակտիվների ներգրավման հակումը, ֆինանսական հատվածի զարգացման մակարդակը[2]:

Աղյուսակ 2-ի տվյալները փաստում են, որ ԵԱՏՄ անդամ երկրներում դրամայնացման մակարդակը ցածր է, ինչը վկայում է տնտեսավարող սուբյեկտների՝ ազգային արժույթի նկատմամբ վստահության ցածր մակարդակի մասին: Սակայն, Ռուսաստանի Դաշնությունում այս ցուցանիշի մակարդակը բարձրացնելու կայուն միտում կա, որը կարելի է համարել տնտեսական զարգացման դրական գործոն:

2016 թ. տվյալներով դրամայնացման ցուցանիշով առաջատարը Ռուսաստանի Դաշնությունն է՝ 44.7%, գնաճի ցուցանիշով՝ Բելառուսի Հանրապետությունը՝ 10,6%: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունը, ապա ԵԱՏՄ անդամ երկրների մեջ դրամայանցման ցուցանիշով երկրորդն է՝ 42,9%, իսկ գնաճի ցուցանիշով՝ 4%, չորրորդը:

Դրամավարկային քաղաքականության ուղղության ընտրությունն ազդում է ՀՆԱ իրացման համար դրամական ապահովության կամ փողի զանգվածի բացակայության վրա: Պետք է նաև հասկանալ, որ դրամայնացման գործոնն ազգային դրամական պահանջարկի գործառույթ է: ԵԱՏՄ անդամ ամեն մի երկրում և յուրաքանչյուր ժամանակահատվածում դրամայնացման գործակիցների արժեքներն անհատական են, քանի որ ազգային արժույթի պահանջարկի նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների վստահության աստիճանը տարբեր է: Բացի այդ, ԵԱՏՄ անդամ երկրների ազգային տնտեսության տարբեր հատվածներում պայմանները կախված են դրամայնացման մակարդակից և դրամավարկային համակարգի վիճակից:

---

[1] Леонтьева Е.А., Моделирование влияния кредитно-денежной политики на макроэкономические показатели. URL: http://economy-lib.com/modelirovanie-vliyaniya-kreditno-denezhnoy-politikina-makroekonomicheskie-pokazateli

[2] IMF wp/12/160 Cameron McLoughlin and Noriaki Kinoshita, Monetization in Low- and MiddleIncome Countries

Աղյուսակ 3

ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան 2005–2016 թթ.[1]

Տարի	Մակրոտնտեսական ցուցանիշներ	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Հայաստան
2005	Դրամայանացում, % Գնաճ, %	25,07 10,91	11,63 8	19,97 7,87	16,8 4,3	15,12 0,6
	ՀՆԱ ազգային արժույթով, մլրդ	21 609,8	65 067,0	7 590, 5	94,1	2 242, 880 9
2009	Դրամայանացում, % Գնաճ, %	35,34 8,8	14,09 10,1	31,37 6,2	22 6,8	19,84 3,4
	ՀՆԱ՝ ազգային արժույթով, մլրդ	38 807,2	137 442,0	17 007, 6	201,2	3 141, 651 0
2010	Դրամայանացում, % Գնաճ, %	39,44 8,78	14,98 9,9	30,12 7,8	24,3 7,8	25,94 8,2
	ՀՆԱ՝ ազգային արժույթով, մլրդ	46 308,5	164 476,0	21 815, 5	220,3	3 460, 202 7
2011	Դրամայանացում, % Գնաճ, %	41, 01 6,10	14,5 108,7	25,9 7,4	21,7 16,6	26,34 7,7
	ՀՆԱ՝ ազգային արժույթով, մլրդ	59 698,1	297 157,7	27 571,9	285,9	3 777, 945 6
2012	Դրամայանացում, % Գնաճ, %	40, 95 6,58	12,5 21,8	28.1 6	24,9 2,7	29,83 2,6
	ՀՆԱ՝ ազգային արժույթով, մլրդ	66 926,9	530 355,5	30 347,0	310,4	4 000, 7220
2013	Դրամայանացում, % Գնաճ, %	47,04 6,45	12,27 16,5	24,60 4,8	25,5 6,6	36,1 5,8
	ՀՆԱ՝ ազգային արժույթով	71 016,7	636 784,00	35 275,1	355,2	4 555, 638 2
2014	Դրամայանացում, % Գնաճ, %	39,32 11,36	11,3 16,2	20,06 7,5	20,5 7,5	37,3 3,0
	ՀՆԱ՝ ազգային արժույթով, մլրդ	79 199,7	778 455,5	38 033,1	400,7	4 828, 626 3
2015	Դրամայանացում, % Գնաճ, %	44,53 12,9	10,2 12	21,5 13,9	16,3 6,5	36,8 3,7
	ՀՆԱ՝ ազգային արժույթով, մլրդ	83 232,6	86 9701,7	39 675,8	430,5	5 043, 633 2
2016	Դրամայանացում, % Գնաճ, %	44,7 5,4	11,4 10,6	29,5 8.9	25,1 2,9	42.9 4,0
	ՀՆԱ՝ ազգային արժույթով, մլրդ	86 043,6	94 300,0	40 884,1	458,0	5 079, 864.6

[1] Հաշվարկել և կազմել է հեղինակը՝ հետևյալ վիճակագրության հիման վրա՝ URL: http://уровень-инфляции.рф/таблица_инфляции.aspx;
URL:http://belstat.gov.by/ofitsialnaya-statistika/otrasli-statistiki/natsionalnyescheta/osnovnye-pokazateli-za-periodspogody_2/proizvodstvovalovogovnutrennegoprodukta;
URL:http://www.gks.ru/wps/wcm/connect/rosstat_main/rosstat/ru/statistics/accounts/#URL:http://myfin.by/info/inflyaciya URL:http://www.stat.gov.kz URL: http://www.cba.am

Այս առումով, ԵԱՏՄ անդամ երկրներում ենթադրվող և առաջիկա գնաճային թիրախավորման անցումը կբարելավի դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը (դրան հասնելու համար Ռուսաստանի ԿԲ-ն, օրինակ, ներկայացրել է հիմնական դրույքը, բոլոր երկրներում փոխվել է կենտրոնական բանկերի մոտեցումը փոխարժեքի նկատմամբ):

Դրամավարկային համակարգի փոխկապակցվածությունը տնտեսության այլ ֆունկցիոնալ համակարգերի հետ, որոնք բացահայտվել են հետազոտության արդյունքում, ապացուցում են մակրոտնտեսական վիճակի կարգավորման գործում սիներգետիկ ազդեցության հասնելու և դրամավարկային ոլորտի կարգավորման գործընթացի նոր պարադիգմի ձևավորման անհրաժեշտությունը՝ երկրի ֆինանսական քաղաքականությամբ միասնական պետական դրամավարկային քաղաքականության համաձայնեցման հիման վրա և միջին ու երկարաժամկետ հեռանկարում միջազգային քաղաքականության արդիականացման նպատակով[1]:

АШОТ МАТЕВОСЯН
ТАТЕВИК АЗАТЯН

ВЛИЯНИЕ МОНЕТАРИЗАЦИИ НА ЭКОНОМИЧЕСКУЮ СИТУАЦИЮ (НА ПРИМЕРЕ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКЕГО СОЮЗА)

Ключевые слова: *Евразийский экономический союз, денежные агрегаты, монетаризация, ВВП, национальный банк, коммерческие банки валюта, система*

В рамках текущей статьи было намечено представить влияние монетаризации на экономическую ситуацию стран-членов Евразийского экономического союза.

В частности, была раскрыта роль денежно-кредитной политики и ее основные области, стабильность денежной сферы и ее влияния на макроэкономические показатели. Была рассмотрена денежно-кредитная политика стран-членов Евразийского экономического союза и представлены данные о денежных агрегатах. Были рассчитаны уровни монетаризации стран-членов Евразийского экономического союза, которые позволяют сравнивать денежные агрегаты и выявить степень обеспечения объема денежной массы для реализации ВВП.

ASHOT MATEVOSYAN
TATEVIK AZATYAN

THE IMPACT OF MONETARIZATION ON THE ECONOMIC SITUATION (BY THE EXAMPLE OF EURASIAN ECONOMIC UNION)

Key words: *Eurasian Economic Union, monetary aggregates, monetarization, GDP, National bank, commercial banks, currency, system*

[1] Абрамова М.А., Концепция развития денежной системы России в условиях модернизации национальной экономики : дис. … д-ра экон. наук. 08.00.10 - Финансы, денежное обращение и кредит. М., 2014.

Within the framework of the current article it has been intended to present the impact of monetarizatioan on the economic situation of Eurasian Economic Union member countries.

In particular, the role of monetary policy and its main areas, the environment of monetary sustainability and its impact on macroeconomic indicators was revealed. Monetary policy of Eurasian Economic Union member countries was reviewed and the data of monetary aggregates were presented. The monetization levels of Eurasian Economic Union member countries were calculated, which allows to compare the monetary aggregates and determine the extent to which the volume of cash flows is provided for the liquidity of GDP.

ՖԻՐՈՒԶԱ ՄԱՅԻԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԱՃՈՂ ՀԱՏՈՒՅՑԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՄՈԴԵԼՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *տնտեսական աճ, մարդկային կապիտալ, աճող հատույց, նվազող սահմանային օգտակարություն, մարդկային կապիտալի իրացում*

Հոդվածում քննարկված է էնդոգեն տնտեսական աճի մոդելների էմպիրիկ հետազոտությունների արդյունքում դրսևորվող աճող հատույցի հիմնախնդիրը: Ներկայացված են այդ երևույթի հնարավոր պատճառներն ու տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեցող մեկնաբանությունները: Հեղինակը տնտեսական աճի մոդելների էմպիրիկ հետազոտությունների արդյունքում դրսևորվող աճող հատույցի բացատրության համար առաջարկել է նոր մոտեցում՝ հիմնված մարդկային կապիտալում կատարվող ներդրումների աճող հատույցի կանխադրույթի վրա:

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում առանձնակի նշանակություն են ստանում մարդկային կապիտալի ձևավորումը և իրացումը՝ որպես տնտեսական աճի կարևոր գործոններ: Աշխարհի բոլոր երկրների զարգացման մակարդակը, տեմպը և հեռանկարները գնալով էլ ավելի են կանխորոշվում կուտակված մարդկային կապիտալի մեծությամբ և որակով, քանզի XX դարի տեղեկատվական հեղափոխությունը նոր պահանջներ է ներկայացնում գիտելիքների գեներացման, փոխանցման, ներդրման գործընթացներին, և այս առումով, հետարդյունաբերական տնտեսության կարևորագույն ռեսուրս է դառնում մարդկային կապիտալը՝ որպես նոր գիտելիքի ստեղծող, փոխանցող և կիրառող: Դա իր արտացոլումը գտավ մարդկային կապիտալի տեսության, իսկ հետագայում նաև զարգացած երկրների տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների մեջ, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում կրթության, գիտության և առողջապահության զարգացմանը: Մարդկային կապիտալի ձևավորման վրա կատարվող ծախսերը սկսեցին ընկալվել որպես ներդրումներ, որոնք, ֆիզիկական կապիտալի համեմատ, ապահովում են ավելի մեծ հատույց: Ներկայումս գրեթե համընդունելի է դար-